# ՏԵՂԵԿԱՆՔ

**Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ**

## Իրավական ակտի նախագծի անվանում

«Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

## Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Էկոնոմիկայի նախարարություն

## Իրավական ակտի տեսակ

Որոշում

## Ոլորտ

Գյուղատնտեսություն, Էկոնոմիկա

## Հանրային քննարկման ժամկետ

03/10/2019 - 19/10/2019

## Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 7 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 7 առաջարկ

## Քվեարկության արդյունքներ

8 կողմ

1 դեմ

**Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից**

**22/10/2019**

## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| հ/հ | Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման | էջ 39-ում Առաջադրված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները բաժնի 1.1. կետում (Նվազեցնել չօգտագործվող հողատարածքները և զարգացնել հողային շուկան) առաջարկում ենք ավելացնել հետևյալ կետը՝ «Կարգավորել արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանը նպաստող իրավական և ինստիտուցիոնալ | Նախագծի «Առաջադրված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները» բաժնի 1.1 կետը վերաբերվում է միայն չօգտագործվող հողերի շրջանառության մեջ ներգրավմանը և հողային շուկայի զարգացմանը: | Ընդունվել է ի գիտություն: Տրվում է պարզաբանում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հարթակի քարտուղարություն<br><br>18.10.2019 11:07:20 | շրջանակը»: | | |
| 2 | ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն<br><br>18.10.2019 11:07:20 | Հավելված 2-ում Թիրախային ցուցանիշների Հողեր բաժնում Գյուղատնտեսական նշանակության հողերի՝ մասնավորապես արոտավայրերի և խոտհարքների թիրախային ցուցնիշների ցանկում ավելացնել որակական ցուցանիշներ՝ օրինակ արտադրողականություն, դեգրադացման աստիճան և այլն | Նախագծի հավելված 2-ի թիրախային ցուցանիշների «Հողեր» բաժնում գյուղատնտեսական նշանակության բոլոր հողերի համար ներկայացված են միայն քանակական ցուցանիշներ: | Ընդունվել է ի գիտություն: Տրվում է պարզաբանում: |
| 3 | ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի | Ութերորդ բաժնում (Միջազգային կազմակերպությունների աջակցության և աշխատանքների համակարգման ոչ արդյունավետ կառուցակարգեր) առաջարկում ենք ավելացնել հետևյալ պարբերությունը" «2018թ" հիմնադրվել է «ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակը», որի նպատակն է համակարգել | Նախագծի ութերորդ բաժնում ներկայացված են արդեն իսկ իրականացված և արդյունքային ցուցանիշներով ծրագրեր: Հաշվի առնելով, որ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվում են բազմաթիվ ծրագրեր, ընթացիկ իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը չի | Ընդունվել է ի գիտություն: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | քարտուղարություն<br>18.10.2019 11:07:20 | ծրագրային գործողությունները, բացահայտել հնարավոր համագործակցային ոլորտները, իրականացնել համատեղ ծրագրեր, ինչպես նաև առաջարկություններ ներկայացնել շահագրգիռ գերատեսչություններին՝ ոլորտը կանոնակարգող օրենսդրական և գերատեսչական, բաց կամ անկատար օրենքները և որոշումները լրացնելու կամ փոփոխելու, ինչպես նաև համապատասխան հայեցակարգերի մշակելու և ընդունելու վերաբերյալ: Հարթակի աշխատանքներում ներգրավված են մի շարք միջազգային, պետական և տեղական կառույցներ, որոնք 2019 թվականին նախաձեռնել են ՀՀ բնական կերհանդակների կառավարման հայեցակարգի մշակման գործընթացը»: | ներառվել նախագծում: | |
| 4 | ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի | Հավելված 1-ում SWOT վերլուծության Վտանգներ հատվածում՝ Գյուղատնտեսություն և պարեն բաժնում առաջարկում ենք ավելացնել՝ «Արոտավայրերի և խոտհարքների անկանոն շահագործումը և համապատասխան օրենսդրական կարգավորումների բացակայությունը կհանգեցնեն արոտավայրերի և խոտհարքների էկոլոգիական և տնտեսական խնդիրների սրմանը՝ վտանգելով երկրի | Նախագծի հավելված 1-ում SWOT վերլուծության «Վտանգներ» հատվածի «Գյուղատնտեսություն և պարեն» բաժնում ներառված է «Գյուղատնտեսական չօգտագործվող հողերի ավելացում» դրույթը, ինչը և հետևանք է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի անկանոն շահագործման և | Ընդունվել է ի գիտություն: Տրվում է պարզաբանում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | քարտուղարություն<br><br>18.10.2019 11:07:20 | պարենային անվտանգությունը»: | ոչ նպատակային օգտագործման: | |
| 5 | ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն<br><br>18.10.2019 11:07:20 | Հավելված 1-ում SWOT վերլուծության Թույլ կողմեր հատվածում՝ Գյուղատնտեսություն և պարեն բաժնում առաջարկում ենք ավելացնել՝ «Արոտավայրերի և խոտհարքների կառավարման օրենսդրական կարգավորումների բացակայություն, արոտավայրերի և խոտհարքների անկանոն շահագործում»: | Օրենսդրական դաշտը կարգավորվում է ՀՀ հողային օրենսգրքով, ՀՀ կառավարության 14.04.2011 թ.-ի N 389-Ն և 28.10.2010 թ. N 1477-Ն որոշումներով և այլ իրավական ակտերով: Միաժամանակ, Նախագծի հավելված 1-ում SWOT վերլուծության հատվածում «Թույլ կողմեր» հատվածի 5-րդ կետում «Հողերի նպատակային օգտագործման ցածր մակարդակ» դրույթը արդեն իսկ ենթադրում է արոտավայրերի և խոտհարքների անկանոն շահագործումը: | Ընդունվել է ի գիտություն: Տրվում է պարզաբանում: |
| 6 | Տիգրան Սարաֆյան<br><br>09.10.2019 15:31:40 | Գրված է նախագիծ որը հեռու է մեր այսօրվա գյուղ. իրականությունից, այս զգայուն ոլորտի խնդիրների բացահայտումը պատշաճ չի իրականացված, հանել նախագիծը և վերախմբագրել ոլորտից հասկացող մասնագետների հետ, | «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության» նախագիծը նախապատրաստվել է | Ընդունվել է ի գիտություն: Տրվում է պարզաբանում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | համառոտ և ամբողջական տարբերակներով՝ երկու լեզվով (հայերեն, անգլերեն): Ռազմավարության մշակման ընթացքում էկոնոմիկայի նախարարության համապատասխան վարչությունների մասնագետների հետ իրականացվել են ներքին քննարկումներ, և հուլիս ամսին կազմակերպվել է քննարկում շահագրգիռ և դոնոր կազմակերպությունների (ՀԲ, ԵՄ, ADA, SDC, FAO, USAID, USDA, UNDP, KFW, CARD, UNHCR, WFP և այլն) հետ: Միաժամանակ նախագիծը քննարկելու նպատակով հանդիպումներ են կազմակերպվել ոլորտի ներկայացուցիչների հետ, այդ թվում՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, հասարակական կազմակերպությունների, փորձագետների, ֆերմերների և գյուղատնտեսական ոլորտի | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | գիտության ներկայացուցիչների և այլ պատասխանատուների հետ: | |
| 7 | Արմեն Վարդանյան<br>04.10.2019 13:29:31 | Ռազմավարության 12-րդ էջում նշված 7 ռազմավարական առաջնահերթություններում լրացնել հետևյալ առաջնահերթությունները՝ բարձրացնել գյուղատնտեսական կենդանիների և մշակաբույսերի առողջության ապահովման մակարդակը. ապահովել հանրապետությունում կայուն անասնահամաճարակային և բուսասանիտարական իրավիճակը. բարձրացնել պարենային ինքնաբավության ապահովման մակարդակը: | Ռազմավարության նախագծում նշված հարցերին անդրադարձ է կատարվել ինչպես «Գյուղատնտեսության ոլորտի զարգացման մարտահրավերներն ու խնդիրները», այնպես էլ «Առաջնահերթությունները, առաջադրված խնդիրները եվ դրանց լուծմանն ուղղված միջոցառումները» բաժիններում: Մասնավորապես, «Գյուղատնտեսության ոլորտի զարգացման մարտահրավերներն ու խնդիրները» բաժնի «9.Պարենային անվտանգության ապահովում» (էջ 23) և «10.Սննդամթերքի անվտանգության ցածր մակարդակը» (էջ 24) մասերում, «Առաջնահերթությունները, առաջադրված խնդիրները եվ դրանց լուծմանն ուղղված միջոցառումները» բաժնի «3. | Ընդունվել է ի գիտություն: Տրվում է պարզաբանում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Բարելավել պարենային անվտանգությունը և սնուցումը» (էջ 45), «2.Ապահովել սննդամթերքի անվտանգությունը» (էջ 41) մասերում: | |